Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Պ-835-14.07.2015,23.10.2015-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի 105-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.

«5.1. Նիստի սկզբում տրվում են ոչ ավելի, քան երկու գրավոր հարցի պատասխան:»,

2) 6-րդ մասում «երեք» բառերը փոխարինել «երկու» բառերով, իսկ «երկու» բառերը՝ «մեկ» բառերով,

3) 7-րդ մասում «Եթե գրավոր հարցերին պատասխանելուց հետո նիստի ժամանակը չի սպառվում, ապա» բառերը փոխարինել «Գրավոր հարցերի պատասխաններն ավարտվելուց հետո» բառերով,

4) 7.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7.1. Սույն հոդվածի 7-րդ կետով նախատեսված դեպքում բանավոր հարցերը տրվում են հետևյալ հերթականությամբ՝

ա) ընդդիմադիր խմբակցությունների 2-ական հերթագրված պատգամավորների հարցերը.

բ) ոչ ընդդիմադիր խմբակցությունների 2-ական հերթագրված պատգամավորների հարցերը.

գ) հերթագրված մյուս պատգամավորների հարցերը:»,

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.2-րդ մասով.

«7.2. Եթե բանավոր հարցերին պատասխանելուց հետո նիստի ժամանակը չի սպառվում, ապա սույն հոդվածի 5-րդ կետով սահմանված կարգով տրվում են

գրավոր հարցերի պատասխաններ: Հարցերի բացակայության դեպքում նիստն համարվում է ավարտված:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը
ՀՀ ԱԺ պատգամավոր Էդմոն Մարուքյան	1-ին հոդվածի 4-րդ կետ	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի 4-րդ կետըխմբագրել հետեւյալ կերպ. «7.1. Սույն հոդվածի 7-րդ կետով նախատեսված դեպքում բանավոր հարցերը տրվում են հետևյալ հերթականությամբ՝ ա) ընդդիմադիր խմբակցությունների 2-ական հերթագրված պատգամավորների հարցերը. բ) ոչ ընդդիմադիր խմբակցությունների 2-ական հերթագրված պատգամավորների հարցերը. գ) խմբակցություններում եւ պատգամավորական խմբերում չընդգրկված պատգամավորներից հարցի համար առաջինը հերթագրված պատգամավորը. դ) հերթագրված մյուս պատգամավորների հարցերը:»:	Առաջարկությունը չի ընդունվել